# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ 19-20-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

**ՊՈՂՈՍՅԱՆ ԱՇԽՈՒՆՋ**
*Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,*
*ԳՊՀ դասախոս*
էլփոստ՝ ashkhunjpoghosyan@gmail.com
**ՄԱՐԳԱՐՅԱՆ ՋՈՒԼԻԵՏԱ**
*ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի պատմության*
*բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի*
էլփոստ՝ julya.margaryan1999@mail.ru

***Գեղարքունիքի տարածաշրջանն ունեցել է պատմական ու ժողովրդագրական բուռն զարգացումներ, որոնք անտարակույս իրենց կնիքն են թողել տեղի մշակութային համալիրների ձևավորման վրա:***

***Ներկա հոդվածում տրված է Գեղարքունիքի գորգագործական մշակույթի հակիրճ նկարագիրը 19-20-րդ դարերում, ներկայացված են տարածաշրջանին բնորոշ գորգերի հիմնական տիպերը:***

***Բանալի բառեր՝*** *գորգագործական մշակույթ, արվեստ, գորգ, կարպետ, ջեջիմ, գեղազարդման ավանդույթներ, նախշ, երկրագիտական թանգարան:*

Այս գավառն ու ընդհանրապես ամբողջ Սևանի ավազանը ներառված էին պատմական Սյունիքի կազմում և մշակութային կյանքի ծաղկուն կենտրոններ էին: Կարևոր է, որ դրա մասին եղած վկայություններն էլ հասել են մինչ մեր ժամանակներն ու հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու տարածաշրջանում ձևավորված պատմամշակութային ավանդույթների մասին: Այդպիսի հուշարձաններից են վաղ ու զարգացած միջնադարում կառուցված աշխարհիկ ու հոգևոր բնույթի շինությունները, կոթողները, տապանաքարերը, կիրառական ու գեղազարդման արվեստին վերաբերող առարկաները: Մեր ձեռքի տակ եղած տարաբնույթ աղբյուրները հնարավորություն են տալիս նշելու, որ Գեղարքունիքում զարգացած էր նաև գորգագործական մշակույթը:

Զարգացած և ուշ միջնադարյան ժամանակաշրջանի Գեղարքունյաց գորգագործական մշակույթի նկարագրի մասին պատկերացում ստանալու համար կարևոր են Նորատուսի տապանաքարերը: Դրանցից մի քանիսի վրա պատկերված են գորգատիպ փռոցներ, որոնց գեղազարդման մանրամասները համապատասխանում են նաև Սյունիքի, Արցախի և Ուտիքի գորգագործական կենտրոններին բնորոշ գորգերի մի շարք տիպերի գեղազարդման ավանդույթներին: Մասնավորապես խոսքը վերաբերում է բուսածաղկային բնույթի՝ այս պարագայում երկրաչափականացված վարդակներին, շեղանկյունատիպ ու երկարավուն խոշոր հորինվածքներին, կենդանապատկերներին ու երկնային մարմիններ ներկայացնող խորհրդանշաններին: Բացի դրանցից՝ կան նաև գորգապատկերներ, որոնք ընդգծված են ծոպերի առկայությամբ և գեղազարդված են վարդակներով:

Տապանաքարերից մեկին պատկերված է գորգ, որին նստած են երաժիշտները: Դրանք բոլորն էլ կարևոր են՝ Սևանի ավազանի ու մանավանդ Գեղարքունիքի գորգագործական մշակույթի ուշ միջնադարյան ավանդույթների մասին պատկերացում կազմելու համար[1]:

Գորգագործության վերաբերյալ կարևոր տեղեկություններ կան նաև տարածաշրջանի տնտեսական մշակույթին ու արհեստներին վերաբերող 19-րդ դարում արված վիճակագրական ուսումնասիրություններում:

Այս առումով հետաքրքրություն են ներկայացնում Ա. Պարվիցկու և Ա. Տեր-Մարկարովի կողմից 1880-90-ական թվականներին Նոր Բայազետի գավառում արված դիտարկումները: Ա. Տեր-Մարկարովի հավաքած տեղեկությունների համաձայն՝ գորգագործական նշանավոր կենտրոնի համբավ ուներ Գյոզալդարան (ներկայումս՝ Վարդենիկ), ուր գործում էին գործվածքի զանազան տեսակներ, այդ թվում՝ գորգեր, կարպետներ, այդ նպատակով հիմնականում օգտագործվում էին բնական ներկանյութերով ներկված թելերը:

Հաղորդելով այդ ամենի մասին՝ Տեր-Մարկարովը նշել է նաև, որ տներում կային հատուկ պահոցներ՝ ծալքեր, որոնցում պահում էին գորգերն ու մյուս գործվածքները: Նոր Բայազետի գավառի հարավարևմտյան մասի

[1] Ա. Ա. Պողոսյան, Տ. Վ. Մկրտչյան,Գեղարքունիքի գորգագործական մշակույթի ավանդույթների մասին, ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, №13, 2011թ, էջ 188-189:

գյուղերի վերաբերյալ այդ նույն նկարագիրը ներկայացնում է Ա. Պարվիցկին[1]:

Գեղարքունիքի գորգագործական մշակույթի մասին բավականին տվյալներ է հաղորդում Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը: Դրանք վերաբերում են գորգերի գործածման ոլորտներին, դրանց տեսականուն ու նույնիսկ գեղազարդման առանձնահատկություններին: Նա հաղորդում է Նոր Բայազետում հարսանյաց արարողությունների ժամանակ գորգերի գործածման, հատակն այդ ընթացքում գորգերով ու թաղիքներով ծածկելու մասին: Նա հաղորդում է գորգը հարսի օժիտի կազմում լինելու մասին[2]: Բասարգեչարի մասին էլ (ներկայումս՝ Վարդենիս) հաղորդում է, որ այդտեղ կանայք գործում էին խալիչա և կարպետ:

20-րդ դարի սկզբներին Գեղարքունիքում կոնկրետ միջոցառումներ են իրականացվում տեղական բրդի հումքը գորգագործության զարգացմանն ուղղելու համար: 1901 թվականին Նոր Բայազետում ստեղծվում է մի ընկերություն, որը տեղում բրդի պաշարները օգտագործելու ու գորգագործությունը զարգացնելու նպատակով Գեղարքունիքի մի շարք բնակավայրերում հիմնում է գորգագործական մանուֆակտուրաներ: Դրանցում ներգրավված գորգագործուհիներին տրամադրվում են հումք ու համապատասխան գորգանկարներ, կցվում են համապատասխան մասնագետներ, որոնք էլ կազմակերպում են դրանց աշխատանքները: Արտադրված գորգերն էլ մատչելի գներով գնում էր այդ նորաստեղծ ընկերությունն ու կազմակերպում դրա իրացման հետագա գործընթացները[3]:

Արդեն 1913 թվականին այդ մանուֆակտուրաներում աշխատում էր շուրջ 710 գորգագործուհի:

Գորգագործական մշակույթի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մերձակա գորգագործական կենտրոններում գործել են հիմնականում նույն տիպի գորգեր ու կարպետներ, ուստի Գեղարքունիքի գորգագործական ավանդույթներն էլ առանձնապես շատ չպետք է տարբերվեին Արցախյան ու հատկապես Գարդմանի, Սոթքի, Ծարի ու Քաշաթաղի գորգագործական ավանդույթներից:

---

[1] Ա. Ա. Պողոսյան, Տ. Վ. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 189:

[2] Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանց, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր – Բայազետի գաւառ. Գրեց Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանց Նախիջեւանցի միաբան սուրբ Էջմիածնի /ի1862 թուից 1895 թիւն/, Վաղարշապատ, 1896,, էջ 465:

[3] Հ. Հարությունյան, Նոր Բայազետի գավառը 1828-1913թթ, Եր.,2008, էջ 215-2016:

Այդ նկատառումներից ելնելով՝ հավանական ենք համարում, որ 17-18-րդ դարերում Գեղարքունիքի գորգագործական կենտրոններին բնորոշ էին հիմնականում Արցախի ու Սյունիքի գորգագործական կենտրոններում լայն տարածում ունեցած «**Սոդք**», «**Ամարաս**», «**Ջրաբերդ - Վիշապագորգ**», «**Ջրաբերդ**», «**Ջրաբերդ – Վարանդա**», «**Վահան - Սևան**», «**Տավուշ**», «**Մասյացոտն**», «**Սիսական**», «**Վայք**», «**Ոսկանապատ**», «**Գլաձոր**» տիպերին պատկանող գորգերը: Սրանք բոլորն էլ հայտնի են բազմաթիվ տարբերակների տեսքով, ու այս առումով հատկանշականն այն է, որ Գեղարքունիքի գորգագործական կենտրոններին վերաբերողները բնորոշվում են գեղազարդման մանրամասերի ու գուներանգային հատկանիշների որոշակի առանձնահատկություններով: Այս հանգամանքը խոսում է մերձակա գորգագործական կենտրոնների հետ տարբեր դարաշրջաններում ունեցած կայուն փոխշփումների մասին: 19-րդ դարի վերջերից կովկասյան տնայնագործական կոմիտեն կազմում ու տարածում է Հարավային Կովկասի գորգագործական կենտրոններին բնորոշ ու առևտրականների շրջանում պահանջարկ ունեցող գորգերի տիպերի տեխնիկական նկարներ: Բնականաբար, դա էլ իր հերթին է նպաստում Գեղարքունիքի գորգագործական կենտրոններում գորգերի նոր տիպերի տարածմանը[1]:

Հրապարակված կատալոգների հետազոտման և հատկապես դաշտային ազգագրական հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ տարածաշրջանում հայտնի էին հայոց գորգագործական մշակույթին բնորոշ գորգերի բոլոր խմբերը: Մեզ հայտնի չեն միայն նախշաշերտային խմբին պատկանող նմուշներ: Մեր դիտարկումների համաձայն՝ այստեղ առավել լայն տարածում ունեին երկրաչափական խոշոր հորինվածքներով բնորոշվողներն ու վիշապագորգերի ուշ տարբերակներին վերաբերող գորգերը: Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

**1. «Մեմլինգ»:** Այս տարածաշրջանում, ինչպես նաև Սևանի ավազանի մյուս գորգագործական կենտրոններին բնորոշ է այս տիպի մի առանձնահատուկ տարբերակ, որի գեղազարդման համակարգի առանցքը կազմում են «Մեմլինգ» հորինվածքն ու վիշապի ոճավորումների մի շատ ուրույն տարբերակ: Դրանք ներկայացված են մեկընդմեջ շարքերով և ծածկում են գորգադաշտի կենտրոնը, Որը լայն տարածում ուներ հայոց միջնադարյան զարդարվեստում:

[1] Ա. Ա. Պողոսյան, Տ. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 193:

Տարածաշրջանի գորգագործական կենտրոններում լայն տարածում ունեին ավանդական գորգերի «Վահան» տիպը, որը հայտնի էր «Խաչ խալիչա» անունով[1]:

**2. «Ամարաս»:** Սևանի ավազանին բնորոշ այս նմուշը խնդրո առարկա տիպի տարբերակներից է: Գեղազարդման հիմնական տարրը ութթերթանի խոշոր, բուսածաղկային վարդակն է: Որոշ նմուշներ, որոնք գործել են նաև այդ տարածքի գորգագործական կենտրոններում, բացի նշված հիմնական հորինվածքից, գեղազարդվում էին նաև մեր կողմից «Գետաշեն» անվանումով տարբերակված ուշ վիշապագորգերի «Խնձորեսկ» ենթախմբի տիպերից մեկի գեղազարդման համակագի հիմնական հորինվածքով[2]: Դա բավական բարդ ու հագեցած հորինվածք է և առաջին հերթին ուշագրավ է զույգ առ զույգ պատկերված վիշապի ոճավորումների ծայրահեղ գծայնացված ութ պատկերներով: Այս տիպի գորգերի գեղազարդման համակարգում ակնառու են դիմահայաց պատկերված զույգ թռչնապատկերների ոճավորումները:

**3**. «**Վայք**»: Հյուսիսային Արցախի, Գեղարքունիքի, Սոթքի, Վայքի և պատմական Հայաստանի հյուսիս արևելյան մի շարք գավառների գորգագործական կենտրոններում լայն տարածում ունեցած ուշ վիշապագորգերից են «Վայք» տիպին պատկանողները: Դրանք բնորոշվում են բազմանիստ շրջանակի շուրջ պատկերված վիշապի պարզունակ **«S»**-աձև ութ ոճավորումներով, որոնք էլ իրենց հերթին զույգ առ զույգ ամփոփված են իրարից տարանջատված, բազմանիստի նիստերին կցված մեկական ձևավոր շրջանակում[3]: Ի դեպ, այս տիպի գորգերը շատ ավելի վաղ վիշապագորգերի շարքին է դասել գորգագետ ու գորգերի հարուստ հավաքածուի տեր Արթուր Գրիգորյանը[4]: Պատկերագրման այս համակարգն արդեն իսկ բազմաշերտ է, և, ըստ էության, վիշապի ոճավորումների այս տարբերակի ակունքները պետք է փնտրել շատ ավելի վաղ դարերում. այստեղ ակնհայտ են վիշապի հնամենի ոճավորումների վերապրուկները: Կարծում ենք, որ դրանց ոճը համադրելի է պատկերագրման ժայռապատկերային ոճին, և ժամանակին

---

[1] Նույն տեղում, տեղեկությունը տրված է տողատակի ծանոթագրության մեջ:

[2] Տես՝ Վ. Թաթիկյան, նշվ. աշխ., պատկեր 209:

[3] Այս տիպի գորգերի մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Պողոսյան,«Խնձորեսկ» ենթախմբի մի տիպի գորգերի ծագման ու արեալային տարածման հարցի շուրջ.- Հայ ժողովրդական մշակույթ XV, (ավանդականը և արդիականը հայոց մշակույթում), Եր., 2010, էջ 400- 406:

[4] Gregorian T. Arthur, Gregorian Joyce Hampshire, Armenian Rugs from Gregorian Collection, Copyright, 1987, էջ 170-171, նկ. 87:

հնարավոր է, որ ունեցել են մատուցման այլ ձևեր: Ենթադրում ենք, որ այս տիպի հիման վրա ավելի ուշ ձևավորվել են ենթախմբին պատկանող մյուս տիպերը: Նշենք, որ այս տիպին պատկանող գորգերը, իրենց տարբերակներով հանդերձ, առավել բնորոշ էին Վայքի գորգագործական կենտրոններին, որով էլ պայմանավորված է մեր կողմից դրանց տրված «**Վայք**» անվանումը:

**4. «Կոգովիտ»:** Հայտնի էր Գեղարքունիքի գորգագործական կենտրոններում և առևտրականների միջավայրում էլ տարբերակվում էր **«Բայազետ»** անվանումով[1]: Այդ փաստն արդեն մատնանշում է տիպի բայազետյան ակունքները: Դրա գեղազարդման համակարգը բնորոշվում է ամբողջ գորգադաշտը ծածկող երկայնաձիգ, կոնաձև գագաթներով երկու միանման բազմանիստ շրջանակով, որոնցում ներկայացվում են երկրաչափականացված վարդակներ, աստղազարդեր ու մանավանդ «խոյեղջյուր» ոճավորումներ: Կարևոր բնորոշիչներից են որոշ նմուշների երկայնաձիգ բազմանիստների միջանկյալ տարածքի կենտրոնում պատկերված սափորատիպ հակընդդեմ ներկայացված հորինվածքները: Հայաստանի թանգարաններում պահվող նմուշները, ըստ եղած տեղեկությունների, վերաբերում են Գեղարքունիքի ու Սոթքի գորգագործական կենտրոններին կամ ձեռք են բերվել այդ տարածաշրջաններից: Անշուշտ, չի բացառվում, որ դրանց որոշ մասը անմիջականորեն ստեղծվել է Բայազետում, սակայն անկախ դրանից, վերը նշված գործոններից ելնելով, գտնում ենք, որ գորգերի այս տիպը ձևավորվել է Կոգովիտի ու հարակից տարածաշրջանների գորգագործական կենտրոններում: Այդ հանգամանքը նկատի ունենալով է, որ մեր ներկայացրած տիպաբանական համակարգում դրանք տարբերակված են ոչ թե գավառի կենտրոնի, այլ գավառի անվանումով[2]:

Ի դեպ, այս տիպի գորգերին պատկանող նմուշներից մի քանիսը, որոնք պահվում են Գավառի երկրագիտական թանգարանում, հրատարակվել են իբրև վիշապագորգեր, ընդ որում որպես վիշապ է ներկայացվել իժին

---

[1] Ա Պողոսյան, Տ. Մկրտչյան, Գեղարքունիքի գորգագործական մշակույթի ավանդույթների մասին, Գիտական հոդվածների ժողովածու, Գավառի պետական համալսարան, 13, Եր., 2011, էջ 193-194:

[2] Ա. Պողոսյան, Հայոց գորգագործական մշակույթը 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին, Հայոց ազգային մշակույթի ատլաս, երկրորդ հատոր, Եր., 2009, էջ 171-172:

նմանեցված երկայնաձիգ բազմանիստ շրջանակը, որը մենք համարում ենք չհիմնավորված մոտեցում[1]:

**5. «Սոթք»:** Գեղազարդման հիմնական տարրը հանրահայտ **«Գուհար»** գորգի գեղազարդման համակարգի մանրամասերի երկրաչափականացված տարբերակներից կազմված և ութանիստ շրջանակում ամփոփված հորինվածքն է: Ըստ էության, կարելի է համարել 17-18- րդ դարերի Սյունիքարցախյան գորգարվեստի ավանդույթների, մասնավորապես վիշապագորգերի գուհարյան ենթախմբի ավանդույթները կրող հնամենի տարբերակ: Բնորոշվում է գեղազարդման մանրամասերի հարստությամբ և յուրահատուկ խորհրդաբանությամբ: Ասվածը վերաբերում է հատկապես ոճավորված վիշապապատկերներին: Այս տիպի հիմնական հորինվածքը տեղ է գտել նաև Սոթքի, Գեղարքունիքի և հյուսիսային Արցախի գավառներում ստեղծված անկողնակապարկերի գեղազարդման համակարգում: Այս հանգամանքները նկատի ունենալով է, որ տիպը տարբերակել ենք **«Սոթք»** անվանումով: Վիշապապատկերների ոճավորման ու մատուցման այս տարբերակում նկատելի է իշխանական տներին կից եղած գորգագործական արհեստանոցների վարպետ գորգագործուհիների և հատկապես գորգանկարիչների տեղյակ լինելը հայոց գորգարվեստին բնորոշ գեղարվեստական ու տեխնոլոգիական լավագույն ավանդույթներին:

Գեղարքունիքի գորգագործական կենտրոններում լայն տարածում ունեին գորգերի մի քանի տասնյակ տիպեր ևս, որոնց բոլորին, ինչպես վերն ասվեց, այստեղ հնարավորություն չունենք անդրադառնալու: Այդուհանդերձ, ընդհանրացված տեսքով կարող ենք առանձնացնել **«Սևան-Վահան»** տիպը, որն առանձնանում է գեղազարդման համակարգի իմաստային խորը բովանդակությամբ, որը պայմանավորված է այս տիպի գորգերի հիմնական հորինվածքի՝ խոշոր խաչազարդի ու նրան լրացնող կենաց ծառերի ներկայությամբ: Ի դեպ, այս տիպի գորգերը տարածաշրջանում հայտնի են հենց **«Խաչ-խալիչա»** անունով[2]:

Գեղարքունիքի գորգագործական կենտրոններում լայնորեն հայտնի են նաև կեռիկազարդ խոշոր հորինվածքներով բնորոշվող գորգերը, որոնց տարբերակներից մեկը մենք անվանել ենք **«Բագրևանդ»**: Այս տիպին

---

[1] Հ. Հովեյան, Գեղարքունիքի գորգագործական ավանդույթների և Գավառի մարզային երկրագիտական թանգարանի գորգերի հավաքածու մասին, «Հայոց գորգագործական մշակույթը» հանրապետական առաջին գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., 2011, էջ 51:

[2] Ա. Պողոսյան, Տ. Մկրտչյան, նշվ.աշխ., էջ 193:

պատկանող գորգերը ընդհանրապես բնորոշ են պատմական Հայաստանի բոլոր գորգագործական կենտրոններին: Գեղարքունիքում այդ տիպի գորգերի գեղազարդման համակարգի բնորոշիչը ատամնազարդ համակենտրոն շեղանկյուն զարդերից կազմված հորինվածքն է, որը ներկայացվում է մեկ կամ երկու երկայնակի շարքով, ու դրա տարբերակներն էլ լայնորեն հայտնի են նաև Բագրևանդի, Բասենի ու Ալաշկերտի գորգագործական կենտրոններում:

Գեղարքունիքի գորգագործական կենտրոններին բնորոշ է նաև բուսածաղկային վարդակներով գեղազարդված գորգերի մի տիպ, որի տարբերակները հայտնի են նաև գորգագործական այլ, այդ թվում նաև Իրանի հյուսիսարևմտյան գորգագործական կենտրոններում: Այս դեպքում գորգադաշտը բաժանված է հավասարաչափ շրջանակների, որոնցում էլ ամփոփված են բուսածաղկային վարդակները[1]: Ընդ որում մասնագիտական շրջաններում գեղազարդման այս սկզբունքը մեծ մասամբ ներկայացվում է որպես քրդական բախտիար ցեղի մշակութային ժառանգություն: Գեղարքունիքում գործված մի այդպիսի գորգ, ի շարս տարածաշրջանի գորգագործական կենտրոններին վերաբերող այլ գորգերի, պահվում է Հայաստանի ազգագրության պետական թանգարանում: Գեղարքունիքին վերաբերող բավականաչափ գորգերի նմուշներ կան Գավառի երկրագիտական թանգարանում:

Այդ հավաքածուի մասին տեղեկություններ է պարունակում թանգարանի երկարամյա գիտաշխատող **Հասմիկ Հովեյանի** վերը հիշատակված հաղորդումը: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ չնայած դրա սահմանափակ ծավալին, այնուամենայնիվ, այն բավականին արժեքավոր տեղեկություններ է պարունակում Գեղարքունիքում ու մասնավորապես Գավառում տարածում ունեցած գորգերի տիպերի, ինչպես նաև գորգագործության հետ կապված զարգացումների մասին: Թանգարանն ունի շուրջ վաթսուն տարվա պատմություն ու իր հավաքածուով ներկայացնում է Սևանի ավազանի հինգհազարամյա պատմությունը: Այստեղ պահվում են տարիների ընթացքում Գեղարքունիքի բնակչությունից հիմնականում 1980-ական թվականներին ձեռք բերված ոստայնանկությանը վերաբերող թանգարանային արժեքներ, այդ թվում՝ գորգ՝ 65 միավոր, կարպետ՝ 104, ջեջիմ՝ 37, խուրջին՝ 17 և այլ նմուշներ[2]:

---

[1] Նույն տեղում, էջ 194:
[2] Հ. Հովեյան, նշվ. աշխ., էջ 50-51:

Հեղինակն իր հավաքած նյութերի հիման վրա պարզել է, որ նախախորհրդային շրջանում Գեղարքունիքում բավականին զարգացած էին գորգագործությունը և կարպետագործությունը: Գորգեր գործում էին Նոր Բայազետի գավառի համարյա բոլոր գյուղերում (42 գյուղ՝ 1912թ. դրությամբ), հատկապես Սարուխան, Կարմիրգյուղ, Նորատուս, Հայրավանք, Հացառատ, Արծվաքար, Լանջաղբյուր գյուղերում: Գորգագործությամբ զբաղվող տնտեսությունների թիվը հասնում էր 537-ի:

Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ 1920-ական թվականներին, տարածաշրջանում աստիճանաբար սկսեցին վերելք ապրել գորգագործական ավանդույթները: Առաջին հանրապետության ժամանակ ձևավորված գորգագործական մանր կազմակերպությունների հիման վրա ստեղծվում են գորգագործական արհեստանոց-արտելներ: Այդպես էլ 1920–ական թվականների վերջին կազմավորվում է Գեղարքունիքի Կարմիրգյուղի արտելը, որի ենթակայության տակ էլ աշխատում էին Կամոյի շրջանի մի շարք գյուղերի տնայնագործները: Գտնվելով Գավառ քաղաքի՝ շրջկենտրոնի մերձակայքում (նախկինում՝ Նոր Բայազետ, այնուհետ՝ Կամո) այս արտելը կոչվում էր շրջկենտրոնի անունով: Կարմիր գյուղի գորգագործական ֆաբրիկան՝ որպես Կամո քաղաքում գտնվող ձեռնարկություն, շահագործման է հանձնվել 1951 թվականին և համարվում էր «Հայգորգի» խոշորագույն մասնաճյուղերից մեկը: Դրա առաջին տնօրենը փորձառու մասնագետ Մարտոյան Վարսենիկն էր (1951-1970թթ.), այնուհետև Գզրարյան Ֆրեդը (1970-1992թթ.): Հայաստանի անկախացումից հետո տնօրեն էր նշանակվել գորգագործության ոլորտի հայտնի մասնագետ և արտադրության կազմակերպիչ Պավլիկ Ենգոյանը: 1996 թվականին ֆաբրիկան սեփականաշնորհվեց և ստեղծվեց ներկայումս էլ գործող «Հայր և որդի Ենգոյաններ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: Մեծ մասամբ այստեղ էին գործում «Հայգորգ» ֆիրմայի գորգանկարիչների գծանկարներով ստեղծված խոշոր չափերի գորգերը: Ձեռնարկությունն իր ներկայությամբ կենդանի է պահել Սևանի ավազանի գորգագործական մշակույթի հարուստ ու հնամենի ավանդույթները, որոնց արտահայտություններն են նրա մասնաճյուղերում եղած տնայնագործ գորգագործուհիների գործած գորգերի թվում եղած «Մասյացոտն», «Իջևան», «Տավուշ», «Ջրաբերդ» և այլ տիպերի գորգերը: Այստեղ օգտագործվող թելը ստանում էին տնայնագործական եղանակով, «բալբաս» ցեղատեսակի ոչխարի բրդից, ներկում էին տեղական ներկաբույսերից ստացված ներկերով, որը որոշակիորեն բարձրացնում էր արտադ-

ռանքի տեխնոլոգիական ու գեղարվեստական մակարդակները: 2010 թվականից ձեռնարկությունը համագործակցում է «Թուֆենկյան կարպետ» ընկերության հետ:

«Հայր և որդի Ենգոյաններ» գորգագործական ֆաբրիկան իրականում արտադրական մի մեծ համալիր է, որտեղ, բացի գորգերից ու կարպետատիպ գործվածքներից, արտադրվում էին նաև գործվածքի այլ տեսակներ, մասնավորապես այստեղ գործում է նաև սրբիչների արտադրամաս, որը հանրապետությունում խոշորագույններից մեկն է: Ընդհանրապես հետխորհրդային շրջանում, երբ երկրաշարժի, արցախյան պատերազմի ու շրջափակման պայմաններում հանրապետությունում ստեղծվել էին տնտեսական ծանր պայմաններ, այս ձեռնարկությունը հսկայական դեր խաղաց տարածաշրջանի բնակչությանը աշխատանքով ապահովելու ու նրանց կենսագործունեության հետ կապված խնդիրները լուծելու հարցում: Այդ տարիներին այստեղ տարեկան գործում և իրացնում էին ավելի քան հինգ հազար քառակուսի մետր գորգ: Ընդ որում ձեռնարկության հաշվին այստեղ գործում էր նաև 250 տեղանոց մանկապարտեզ:

Այսպիսով, Գեղարքունիքում գորգագործական մշակույթը, հայոց գորգագործական մշակույթի մերձակա կենտրոնների հետ կազմելով մեկ ամբողջություն, միաժամանակ ունեցել է իր առանձնահատուկ դրսևորումներն ու զարգացման շրջափուլերը: Այդ զարգացումների արդյունքներից մեկն էլ Կարմիրգյուղի գորգագործական ձեռնարկությունն է:

## RUG WEAVING CULTURE OF GEGHARKUNIK IN THE 19-20th CENTURIES

**POGHOSYAN ASHKHUNJ**
*PhD in Historical Sciences, Associate Professor,*
*GSU Lecturer*
e-mail: ashkhunjpoghosyan@gmail.com
**MARGARYAN JULIETA**
*1st year Master student of History Department*
*Faculty of Humanities, Gavar State University,*
e-mail: julya.margaryan1999@mail.ru

Gegharkunik region had a rapid historical and demographic development, which undoubtedly left its mark on the formation of local cultural complexes.

The purpose of the article is to present the rug weaving culture in Gegharkunik in the 19th and 20th centuries, its peculiarities and development trends.

***Key words:*** *rug weaving culture, art, rug, carpet, jejim, ornamentation traditions, ornament, geological museum.*

## КУЛЬТУРА КОВРОТКАЧЕСТВА ГЕГАРКУНИКА В 19-20 ВВ.

**ПОГОСЯН АШХУНДЖ**
*Кандидат исторических наук,*
*Преподаватель ГГУ*
электронная почта: ashkhunjpoghosyan@gmail.com
**МАРГАРЯН ДЖУЛИЕТА**
ГГУ факультет гуманитарных специальностей
отделение история
электронная почта: julya.margaryan1999@mail.ru

Культурно-историческое развитие общества и бурный демографический рост в Гегаркуникском регионе, несомненно, оставили свой след в формировании местных культурных комплексов.

В данной статье дается краткий обзор ковроткачества Гегаркуника в XIX-XX вв.,ее особенности и основные типы ковров региона.

***Ключевые слова:*** *культура ковроткачества, искусство, ковер, карпет (безворсовый ковер), джеджим (палас), орнаментальные традиции, узор, геологический музей.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 20.08.2021թ.:
Հոդվածը գրախոսվել է 12.09.2021թ.: